**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՏԿԵՆ-ՀՄԱՁԲ-2021/1Փ**

ք. Երևան « 02 » « 12 » 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

**2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորուստի չափով: Ընդ որում՝**

**ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,**

**բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (ավելացման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների**

կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[17]

2.4.5 Կատարողը՝ (նախագծման ծառայություն մատուցող ընկերությունը) նախնական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում, վճարում է կրկնակի փորձաքննության իրականացնելու համար անհրաժեշտ գումարը:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործընթացի իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6 655 000 (վեց միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության իրականացման:*

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.15 Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացություն: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում:**

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ք. Երևան, Կոմիտաս 54բ, |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՀ 220183330939000 |
| ՀՀ 900011005718 | ՀՎՀՀ 01508665 |
| գլխավոր քարտուղարին փոխարինող | Գործադիր տնօրեն |
| Ա. Ազատյան | Գ. Առաքելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
« 02 » « 12 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԾՁԲ-2021/1Փ ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ*** | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50531140/13 | Ստորև | դրամ | 1 530 000 | 1 | Ստորև | Ստորև |
| 2 | 50531140/14 | Ստորև | դրամ | 2 175 000 | 1 | Ստորև | Ստորև |
| 3 | 50531140/15 | Ստորև | դրամ | 1 850 000 | 1 | Ստորև | Ստորև |
| 4 | 50531140/16 | Ստորև | դրամ | 1 100 000 | 1 | Ստորև | Ստորև |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

### ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
### Որոտան - Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | Ճանապարհների հիմնանորոգում |
| **Ֆինանսավորման աղբյուր** | ՀՀ պետական բյուջե |
| **Պատվիրատու** | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| **Ծառայության անվանումը** | Որոտան - Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցում |
| **Ճանապարհի անվանումը** | Որոտան - Խոտ ավտոճանապարհ |
| **Փորձաքննության տեսակը** | Պարզ փորձաքննություն |
| **Ընդհանուր դրույթներ** | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան: |
| **Հիմնական պարտականություններ** | Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացության կազմում և տրամադրում: |

| | |
|---|---|
| **Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ** | Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝<br>1. ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,<br>2. ՀՀ գնումների մասին օրենքի,<br>3. ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի,<br>4. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի,<br>5. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,<br>6. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի,<br>7. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| **Սկիզբը** | **ավարտը** |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո | Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման ավարտը՝ մինչև 10 (տաս) օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից |

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

**Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | Ճանապարհների հիմնանորոգում |
| **Ֆինանսավորման աղբյուր** | ՀՀ պետական բյուջե |
| **Պատվիրատու** | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| **Ծառայության անվանումը** | Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցում |
| **Ճանապարհի անվանումը** | Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան ավտոճանապարհ |
| **Փորձաքննության տեսակը** | Պարզ փորձաքննություն |
| **Ընդհանուր դրույթներ** | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան: |
| **Հիմնական պարտականություններ** | Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում:<br>Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում: |

| | |
|---|---|
| **Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ** | Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝<br>8. ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,<br>9. ՀՀ գնումների մասին օրենքի,<br>10. ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի,<br>11. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի,<br>12. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,<br>13. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի,<br>14. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| **Սկիզբը** | **ավարտը** |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո | Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման ավարտը՝ մինչև 10 (տաս) օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից |

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

**Տանձավեր - Շուռնուխ ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | Ճանապարհների հիմնանորոգում |
| **Ֆինանսավորման աղբյուր** | ՀՀ պետական բյուջե |
| **Պատվիրատու** | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| **Ծառայության անվանումը** | Տանձավեր - Շուռնուխ ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցում |
| **Ճանապարհի անվանումը** | Տանձավեր - Շուռնուխ ավտոճանապարհ |
| **Փորձաքննության տեսակը** | Պարզ փորձաքննություն |
| **Ընդհանուր դրույթներ** | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան: |
| **Հիմնական պարտականություններ** | Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում: |

| | |
|---|---|
| **Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ** | Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝<br>15. ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,<br>16. ՀՀ գնումների մասին օրենքի,<br>17. ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի,<br>18. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի,<br>19. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,<br>20. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի,<br>21. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| **Սկիզբը** | **ավարտը** |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո | Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման ավարտը՝ մինչև 10 (տաս) օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից |

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 4

**S-8-49, /S-8-48/ - Լծեն ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | Ճանապարհների հիմնանորոգում |
| **Ֆինանսավորման աղբյուր** | ՀՀ պետական բյուջե |
| **Պատվիրատու** | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| **Ծառայության անվանումը** | S-8-49, /S-8-48/ - Լծեն ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցում |
| **Ճանապարհի անվանումը** | S-8-49, /S-8-48/ - Լծեն ավտոճանապարհ |
| **Փորձաքննության տեսակը** | Պարզ փորձաքննություն |
| **Ընդհանուր դրույթներ** | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան: |
| **Հիմնական պարտականություններ** | Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում:<br>Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների |

| | |
|---|---|
| **Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ** | Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝<br>22. ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,<br>23. ՀՀ գնումների մասին օրենքի,<br>24. ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի,<br>25. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի,<br>26. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,<br>27. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի,<br>28. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| **Սկիզբը** | **ավարտը** |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո | Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման ավարտը՝ մինչև 10 (տաս) օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011005718
գլխավոր քարտուղարին փոխարինող
Ա. Ազատյան

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտաս 54բ,
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220183330939000
ՀՎՀՀ 01508665
Գործադիր տնօրեն
Գ. Արշակյան

(ստորագրություն)

*Հավելված N 2*
*« 02 » « 12 » 2021 թ. կնքված*
*ՏԿԵՆ-ՀՄԱԾՁԲ-2021/1Փ ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման ենթակա ծառայությունների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | **50531140/13** | Որոտան - Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1,530,000.0 | **1,530,000.0** |
| 2 | **50531140/14** | Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2,175,000.0 | **2,175,000.0** |
| 3 | **50531140/15** | Տանձավեր - Շուռնուխ ավտոճանապարհի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1,850,000.0 | **1,850,000.0** |
| 4 | **50531140/16** | Տ-8-49, /Տ-8-48/ - Լճեն ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | | 1,100,000.0 | **1,100,000.0** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011005718
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Ազատյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտաս 54բ,
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220183330939000
ՀՎՀՀ 01508665
Գործադիր տնօրեն
Գ. Արշակյան
(ստորագրություն)

Հավելված 3
« 02 » « 12 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԾՁԲ-2021/1Փ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______
հհ _______
հվհհ _______

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______
հհ _______
հվհհ _______

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 02 » « 12 » 2021 թ. կնքված*
*ՏԿԵՆ-ՀՄԱԾՁԲ-2021/1Փ ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն